

բանդ, եղած մտաւոր եւ քարոյական կեանքին մեւ
 տայ եւ ուղղութիւն, վասնորոյ կիրառամ միջոցաւ
 Արարատայ հետեւեալն յայտնել ի տեղեկութիւն հա-
 մագրի ամենասիրելի ժողովրդոց: զիսկեղծայ մասն
 Ասորիսիւնայ Հայոց Հոգեւոր — ծխական երկուց
 սնոյից Պարոյաց Հոգաբարձուերից երկուքն Սիմէոն
 Մարտիրոսեան պարոն Պօպովեանց եւ Միրայէր Ամ-
 բակունիան պարոն Բուքչալեանց ազգային հարստա-
 տութեամբ վարելով իրենց ստանձնեալ վսեմ պաշտօ-
 նը ի բաւականութիւն ժողովրդեան եւ յօգուտ մտա-
 ւոր եւ քարոյական զարգացման հայազգի երկուց սն-
 ոյից մասնեանց քաղաքիս, ծառայելով առաջինն ինն
 ամ եւ երկրորդն մի տարի եւ չորս ամիս, համաձայն
 իրենց խնդրանաց արձակվեցան Հոգաբարձական պաշ-
 տօնէն: Ընդունելով զրաւոր եղանակաւ օրհնութիւնը
 տեղական ղեկապառն Առաջնորդի եւ զօհուսկութե-
 անք ծխական ժողովրդոց, իսկ փոխական նոցա
 ծխական ժողովի մէջ բազմութեամբ ձայնից ընտրվե-
 ցան եռամսայ ժամանակաւ պարոնայք՝ Բենիամին
 Յովհաննէսեան պարոն Մէլիքեանց եւ Աղէքսանդր
 Սարգսեան պարոն Աղամջանեանց: Եւ զմիջոցայ
 Հայ հասարակութիւնը յիշոյսէ՝ որ նորընտիր պա-
 րոնները կպսակեն ժողովրդեան յոյսը եւ անկախու-
 թիւնը, հոգալով իրենց նախորդներին նման Ազգային Հո-
 գեւոր պարոնաց յառաջողութեան համար, որոնց մէջ
 միայն կարելի է մեր Հայաստանեայց Առաքելական
 տուրք Էկեղեցւոյ կրօնը եւ բաղմահարուստ լիզուն
 եւ ողբն պահպանել, զատրաստելով ուղղիս համար
 աղբիւ Հայեր եւ պարտաճանաչ հայրեր ու մայրեր:
 Ռուսաստանի Ամենորոմած Տէրութեան հաւա-
 տարիս հպատակ Հայկեան ազգը երջանիկ պէտք է
 համարէ իրեն, որ իւր Ընդհանրական ազգասէր
 Հայրապետի՝ Տ. Տ. Գէորգայ հանրաշահ տնօրէ-
 նութեամբ ունի ամեն հայաբնակ քաղաքներում եւ
 գիւղերումը զրապիտութիւն տարածող Ազգային Հո-
 գեւոր — ծխական պարոններ իւր հաւոր ժողովրդի
 տղայոց եւ աղջկանց մտաւոր եւ քարոյական կրթու-
 թիւն տալու, եւ իւր ապագայն ազատելու տղիտու-
 թեան խաւարէն, միայն յոյժ ցանկալի է որ Ազգիս
 միջի հարուստ եւ կարող անձինք հեռատեսութեամբ
 քաղցր ակնարկութիւն եւ խոհմուշադրութիւն զարժ-
 նեն այս ազգային կրթարաններին, որոնք ազգութեան
 համար մեծ նշանակութիւն ունին, եւ որոնց յարա-

տեւութեան եւ յառաջադիմութեան ճամար Ազգասէր
 Հայրապետ ամենայն Հայոց չէ խնայել եւ չէ դա-
 րարում թափել իւր միզը: Եւ զմիջոցայ զմիջոցայ
 ջրօրս ու յայն ԾՅԱԶԷՓ Ա. ՔԱՀԱՆՁԱԺ ՐԻՆԵԻՍԹԱՆԵ.

— 20 Դեկտեմբեր 1877 ամի:

ՅԱՐԱՐԱՐՔԱՆ:

ՊԵՇՏՈՆԵԱՆ

ԿԱՐԳԱՆՈՅՆ ԱՐԵՂԱՅԵՐ

ՍԵԼԱՆՈՒ ԱՆԱՊԱՏԷՆ ՓՈԽԱԳՐՈՒԵԼՈՎ

Ս. Հախիտիսեայ վանուց միաբան կար-
 գութեամբ Յովակիմ Պաղարեանց Օշականցի
 եւ Աստուածատուր Տէր Սարգսեանց
 Պարոնեանց Հ. Նախիջեւանցի Աբեղայք,
 իւրեանց յանձն առած եւ ուխտած կրօ-
 նաւորական կարգի ընդ գէմ՝ միան-
 քստայն Քրիստոնէական զգացմանց եւ
 պարտաւորութեանց հակառակ՝ զրա-
 մանենդութեան քրէական յանցանաց
 մէջ մեղսակից գտնուելով եւ ստուգ-
 ւելով հետազոտութեամբ եւ քննու-
 թեամբ Քաղաքական Իշխանութեան,
 ռւսոյի եւ այսուհետեւ եկեղեցականու-
 թեան անունը եւ կոչումը կրելոյ՝ ինչ-
 պէս նաեւ ի տաճարի Տեառն Աստու-
 ծոյ ծառայելոյ իսպառ անարժան դա-
 տուելով, ըստ հրամանի Վեհ. Հայրա-
 պետի ամենայն Հայոց՝ այսօր՝ 130-ն
 ամսոյս (Նոյեմբերի) բոլորովին լու-
 ծուեցան եւ զրկուեցան ի Քահանա-
 յական եւ ի Արօնաւորական կարգէ եւ
 տօտիճանէ, եւ մերկացուցեալ յեկե-
 ղեցական զգեստուց իրրեւ լոկ աշխար-
 հական յանձնուեցան Քաղաքական
 Իշխանութեան: